ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարանի ասպիրանտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ԸՍՏ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ

Տնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը ոչ միայն տվյալ երկրի տնտեսական աճի կարևոր գործոն է, այլ նաև այն ռազմավարական նշանակություն ունի տնտեսության հետագա զարգացման և հաջորդ սերունդների համար՝ ռեսուրսների պահպանման և փոխանցման տեսանկյունից:

ՀՀ-ում այդ ռեսուրսների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում գյուղատնտեսական նշանակության հողերը, որոնց ոչ արդյունավետ օգտագործման ապացույցն է նաև այն, որ հանրապետության համար այդքան կարևոր նշանակություն ունեցող սահմանափակ ռեսուրսի որոշակի հատվածը (միջինում մոտ 1/3-ը)տարբեր պատճառներով շրջանառությունից դուրս են մնացել և նպատակային են օգտագործվում: Այդ հողատարածքների չմշակման պատճառները, տարբերվում չեն ըստ երկրի տարածքային առանձնահատկությունների և ունեն խորիմաստության տարբեր աստիճան: Իհարկե, ստեղծված իրավիճակը չէր կարող ՀՀ կառավարության ուշադրությունից դուրս մնալ: Այդ հիմնախնդրի մեղմացմանն ուղղված հանրապետությունում իրականացվել են տարբեր ծրագրեր: Այսպես, օրինակ, գյուղատնտեսության և գյուղի զարգացմանն են ուղղված արտոնյալ վարկերի տրամադրման, էլիտար սերմերով ապահովման, ոռոգման համակարգի վերականգնման, ոլորտին հարկային արտոնություններ տրամադրելու և մի շարք այլ ծրագրեր: Դրանք իրականացվել են ինչպես միջազգային տարբեր կառույցների ֆինանսական աջակցությամբ, այնպես էլ հանրային միջոցների հաշվին: Սակայն, անժխտելի փաստ է այն, որ այդ ծրագրերը գյուղատնտեսության ոլորտի էքստենսիվ աճի վրա էական ազդեցություն չեն թողել և չմշակվող հողատարածքների մասնաբաժինն ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողերում դեռևս կայուն նվազման միտում չի ցուցաբերում:

Շուկայական տնտեսության պայմաններում, երբ գյուղատնտեսական նշանակության հողերը հիմնականում տնային տնտեսությունների սեփականությունն են, այդ ռեսուրսի արդյունավետ օգտագործմանն ուղղված պետության միջամտությունը և նպատակային քաղաքականություն իրականացնելու խնդիրը բարդացնող հանգամանքներից մեկն էլ այն է, որ հանրապետության տարածքային միավորներում՝ մարզերում և առավել ևս համայնքներում այդ հիմնախնդրի (հողերի չմշակման) ձևավորման պատճառները էապես տարբերվում են իրենց բնութագրերով, խորության աստիճանով և, բնականաբար, բոլոր համայնքների ներառումով ցանկացած պետական միջամտություն չի կարող ցանկալի արդյունք ապահովել:

Շուկայական տնտեսության պայմաններում այդպիսի սահմանափակ և անփոխարինելի ռեսուրսի ոչ լրիվ օգտագործման պատճառները կարող են պայմանավորված լինել գյուղացիական տնտեսությունների ֆիզիկական, ֆինանսական, արտադրական կարողությունների սահմանափակությամբ, իրացման հետ կապված բարդություններով, այդ գործընթացի ոչ եկամտաբերությամբ, եկամտի այլընտրանքային տարբերակներ ունենալու և մի շարք այլ գործոններով, և թվարկված գործոններից յուրաքանչյուրի պարագայում պահանջվում է և արդյունավետ կարող են գործել միայն իրավիճակին համապատասխանող ազդեցության լծակները:

Քանի որ ըստ համայնքների, նշված գործոնների համեմատական կարևորությունը և ազդեցության չափը գյուղատնտեսության էքստենսիվ աճի վրա չի կարող նույնը լինել, խնդրի պետական կարգավորման մեխանիզմները նույնպես պետք է լինեն տարբերակված: Խնդրի այսպիսի դրվածքը բարդանում է ինչպես գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման պատ-

ճառների բազմազանության, այնպես էլ հանրապետությունում գյուղական համայնքների մեծ թվի պատճառով:

Այս բարդություններից կարելի է խուսափել, եթե հաշվի առնենք, որ տարածքային միավորները բնութագրող գործոնների խիստ տարբերությունների առկայության դեպքում կոնկրետ նպատակի ձեռք բերմանն (հիմնախնդրի լուծմանն) ուղղված տնտեսական քաղաքականությունը հասցեական կարելի է դարձնել երկրի նույնանման բնութագրերով տարածքային միավորների շրջանացման ճանապարհով:

Այսպիսով՝ գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործմանը նպատակաուղղված քաղաքականության շրջանակներում լուծվող խնդիրների բաղադրիչ պետք է համարել երկրի շրջանացումը ըստ այն բնութագրիչների, որոնք խոչընդոտում կամ նպաստում են առաջադրված նպատակի ձեռք բերմանը: Ասվածից հետևում է, որ երկրի տարածքը կարելի է շրջանացնել ըստ տարբեր հատկանիշների:Ուստի այն կարելի է շրջանացնել նաև ըստ գյուղատնտեսական նշանակության հողերի մշակման վրա ազդող հիմնախնդիրների ևս:

Երկրի տարածքային շրջանացումը գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ (լրիվ) օգտագործման նպատակից ելնելով նպատակահարմար է իրականացնել հետևյալ հաջորդականությամբ:

Նախ՝ անհրաժեշտ է ըստ համայնքների հստակեցնել այն հիմնախնդիրները, որոնք պատճառ են հանդիսանում գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման և գնահատել դրանցից յուրաքանչյուրի խորության աստիճանը: Որպես հիմնախնդրի խորության աստիճանը բնութագրող ցուցանիշ, կարծում ենք, կարելի է դիտարկել կոնկրետ պատճառով չմշակվող հողերի մասնաբաժինը համայնքում չմշակվող հողատարածքների նկատմամբ դիտարկվող տարում:

$$C_{ij} = \frac{x_{ij}}{x_i}$$

որտեղ,

i – ն համայնքի համաթիվն է,

j – ն հողերի մշակմանը խոչընդոտող գործոնի համաթիվն է,

C_{ij} – ն հողերի չմշակման պատճառ հանդիսացող j -րդ գործոնի գնահատականն է i -րդ համայնքում,

x_i – ն i -րդ համայնքում չմշակվող հողերի մակերեսն է,

x_{ij} – ն i -րդ համայնքում j -րդ գործոնի պատճառով չմշակվող հողերի մակերեսն է:

Գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման պատճառների ցանկը կարելի է հստակեցնել փորձագիտական հարցումների միջոցով: Նշենք, որ ՀՀ տարածքային զարգացման և կառավարման նախարարության նախաձեռնությամբ ձևավորված «համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակը» ներկայացնող փորձագիտական հարցումների հիման վրա ձևավորված տվյալների բազայում որպես գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման հիմնախնդիրներ առանձնացվել են հետևյալները[1].

1. ականապատված/բռնազավթված հողեր,
2. աղակալված/ ճահճակալված և/կամ դեգրադացված հողեր,
3. ոչ եկամտաբեր,
4. բնակավայրից հեռու հողեր,
5. չոռոգվող կամ ոչ բավարար ոռոգվող,
6. սեփականատերը բացակայում է,
7. սեփականատերը նյութական միջոցներ չունի,
8. սեփականատերը ֆիզիկապես անկարող է մշակել,
9. այլ պատճառներ:

[1] Գյուղատնտեսական նշանակության չմշակվող հողերի և չմշակման պատճառների վերաբերյալ փորձագիտական տեղեկատվություն պարբերաբար հավաքագրվում է տարածքային զարգացման և կառավարման նախարարության նախաձեռնությամբ:

Կարծում ենք, վերոնշյալ թվարկման մեջ պետք է ավելացնել նաև արտադրանքի իրացման հետ կապված բարդությունները ևս: Այս ցանկը կարելի է համալրել փորձագիտական հարցումների հիման վրա, սակայն թվարկված գործոններն էլ բավարար են պատկերացում կազմելու՝ դրանց մեղմելուն ուղղված տարբերակված մոտեցումների անհրաժեշտության մասին:

Այնուհետ, որպես շրջանացման գործընթացի երկրորդ քայլ, անհրաժեշտ է հստակեցնել յուրաքանչյուր տարածքային միավորի (համայնքի) գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակվող տարածքները և չմշակման պատճառները:

Հաջորդ փուլում առանձնացված յուրաքանչյուր հիմնախնդրի համար պետք է ձևավորել փոփոխման միջակայքի սանդղակ և դրա հիման վրա դասակարգել համայնքները:

Վերջին փուլում ձևավորված դասակարգման հիման վրա երկրի գյուղական համայնքները կարելի է շրջանացնել ըստ գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման պատճառների խորության աստիճանի:

Այս մոտեցումը, կարծում ենք, օգտակար կարող է լինել գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործմանն ուղղված տարբերակված տարածաշրջանային քաղաքականություն մշակելու և այն իրողություն դարձնելու գործընթացի համար: Այն նաև հնարավորություն կտա ապահովել այդ քաղաքականության հասցեականությունը:

Այսպես, օրինակ, եթե համայնքում գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման պատճառը ականապատված/բռնազավթված լինելն է, այս հիմնախնդրի լուծման մոտեցումները տնտեսական քաղաքականության շրջանակներից դուրս են: Նկատենք, որ այս պատճառով հանրապետությունում չեն մշակվում գյուղատնտեսական նշանակության չմշակվող հողերի մոտ 5.5%-ը:

Հողերի աղակալված/ ճահճակալված և/կամ դեգրադացված լինելու պատճառով չմշակվող հողերը շրջանառության մեջ ներգրավելու համար անհրաժեշտ է իրականացնել խնդրի լուծմանն ուղղված համապատասխան նպատակային ծրագրեր: Այս պատճառով չմշակվող հողերի մասնաբաժինը նույնպես մեծ չէ: Այն կազմում է չմշակվող հողերի 1.1%-ը:

Ըստ այս գործոնների շրջանացումը նեղացնում է գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետությանն ուղղված տարածաշրջանային քաղաքականության շրջանակներում ներառվող համայնքների ցանկը:

Ներկայացնենք վերը նշված բազայի հողերի չմշակման պատճառները ներկայացնող տվյալներով պայմանավորված վերլուծության արդյունքները:

Գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման պատճառների շարքում դիտարկված գործոններից համեմատաբար մեկ կարևորություն ունի «ոչ եկամտաբեր լինելու» հանգամանքը, որի պատճառով, ըստ փորձագետների տեղեկատվության, չի մշակվում մոտ 127,860 հա հողատարածք, որը կազմում է չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի 28.2%-ը: Ըստ այս պատճառի չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի մասնաբաժինը ընդգծված բարձր է Շիրակի մարզում (չմշակվող հողերի մոտ 93%-ը չի մշակվում ոչ եկամտաբեր լինելու պատճառով) և Լոռու մարզում (համապատասխանաբար՝ 65.7%-ը):

Գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման լուրջ հիմնախնդիր է համարվում սեփականատիրոջ նյութական միջոցներ չունենալը: Այդ պատճառով չեն մշակվում չօգտագործվող այդ ռեսուրսի մոտ 24.2%-ը: Այս հիմնախնդիրն առավել ընդգծված է Արագածոտնի (30.1%) և Գեղարքունիքի (13.6%) մարզերում:

Բոլոր մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման լուրջ հիմնախնդիր է սեփականատիրոջ բացակայությունը: Ըստ էության այս հիմնախնդիրը լուրջ է նաև այն առումով, որ այն պայմանավորում է նաև աշխատանքային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործումը:

Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսների չմշակման վերը ներկայացված գործոնների ազդեցության խորության մասին պատկերացում է տալիս աղյուսակը:

Գյուղատնտեսական նշանակության չօգտագործվող հողատարածքները և չմշակման պատճառները

Չմշակման պատճառները	հա	%
Ականապատված, բռնազավթված	24,933.32	5.5
Աղակալված/ճահճակալված և/կամ դեգրադացված	4,986.66	1.1
Ոչ եկամտաբեր	127,839.95	28.2
Բնակավայրից հեռու հողեր	36,266.65	8
Չոռոգվող կամ ոչ բավարար ոռոգվող	67,999.97	15
Սեփականատերը բացակա է	49,866.65	11
Սեփականատերը նյութական միջոցներ չունի	109,706.62	24.2
Սեփականատերը ֆիզիկապես անկարող է մշակել	22,666.66	5
Այլ	9,066.66	2
Ընդամենը	***453,333.2***	***100***

Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի որոշակի հատվածի չմշակման հիմնախնդրի պատճառների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

- գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակվող հատվածի մարզային տեղաբաշխումն անհավասարաչափ է, և չմշակվող հողատարածքներում մեծ մասնաբաժին ունի Արագածոտնի մարզը (21.7%),
- գյուղատնտեսական նշանակության հողատարածքների չմշակման հիմնախնդրի պատճառներն ըստ համայնքների և մարզերի դիֆերենցված են, ուստի այս հիմնախնդրի հաղթահարմանը նպատակաուղղված տնտեսական քաղաքականությունն ու այն իրողություն դարձնելու միջոցառումներն ու գործիքները ևս պետք է տարբերակվեն,
- հիմնախնդրի հաղթահարմանը նպատակաուղղված տնտեսական քաղաքականությունն ու այն իրողություն դարձնելու միջոցառումներն ու գործիքները կարելի է տարբերակել և հասցեական դարձնել միայն համայնքների շրջանացման ճանապարհով,
- վերլուծվող հիմնախնդրի առաջացման պատճառներից առավել կարևորվում է հողերի մշակումից ստացվող եկամտի ցածր մակարդակը (ոչ եկամտաբեր լինելը), ինչը վկայում է, որ շուկայական տնտեսության պայմաններում այդ հիմնախնդիրը չի կարելի համարել ինքնակարգավորվող, և պետության միջամտությունն իր համապատասխան քաղաքականությամբ անհրաժեշտություն է,
- գյուղատնտեսական նշանակության հողերի որոշակի հատվածը չմշակելու հիմնախնդրի ձևավորման հաջորդ պատճառը (գործոնը) սեփականատիրոջ նյութական միջոցների ոչ բավարար լինելն է, որի մեղմացման ուղղությամբ հանրապետությունում իրականացվել են որոշակի ծրագրեր, օրինակ՝ այդ նպատակին է ծառայել նաև գյուղացիական տնտեսություններին արտոնյալ վարկերի տրամադրումը: Սակայն դիտարկված 2006-2014 թվականներին այս հիմնախնդիրը հիմնականում աճի միտում է ցուցաբերել այն մարզերում, որտեղ այդ վարկերի տեսակարար կշիռն ամենաբարձրն է: Այս հիմնախնդրի մասին որոշակի պատկերացում է տալիս նաև մարզային կտրվածով արտագնա աշխատանքի մեկնողներ ունեցող տնային տնտեսությունների թիվը: Ըստ այս ցուցանիշի առանձնանում են Գեղարքունիքի, Շիրակի և Արագածոտնի մարզերը, որոնցում արտագնա աշխատանքի մեկնողներ ունեցող տնային տնտեսությունների թիվը դիտարկված տարիներին տատանվում է մարզի գյուղական համայնքների տնային տնտեսությունների 1/3-ի սահմաններում, ինչը խոսում է նաև հանրապետության աշխատանքային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման մասին,

գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերի որոշակի հատվածի չմշակման հիմնախնդրի ձևավորման կարևոր պատճառներից է ոռոգման ջրի անմատչելիությունը, սակայն այս հիմնախնդիրը նվազման միտում է ցուցաբերում, ինչը պետք է վերագրել ՀՀ կառավարության և տարբեր միջազգային կառույցների կողմից այդ ոլորտում իրականացվող ծրագրերին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ԸՍՏ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարանի ասպիրանտ

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի որոշակի հատվածի չօգտագործման հիմնախնդրի վրա ազդող գործոնների ուսումնասիրությանը: Հիմնավորվում է այդ հիմնախնդրի լուծմանն ուղղված ըստ տարածքային միավորների տարբերակված քաղաքականության անհրաժեշտությունը:Այդ հիմնախնդրի լուծմանն ուղղված քաղաքականության հասցեականությունն ապահովելու համար առաջարկվում է համայնքների շրջանացման գաղափարը, և միաժամանակ ըստ գյուղատնտեսական հողերի չմշակման պատճառների առաջարկվել է շրջանացման ալգորիթմը:

Բանալի բառեր. *գյուղատնտեսական նշանակության հողեր, շրջանացում, տարբերակված տնտեսական քաղաքականություն, չմշակման պատճառներ, հիմնախնդրի խորություն, տարածքային տարբերություններ, զարգացման անհամաչափություններ, գյուղատնտեսության էքստենսիվ աճ:*

РЕГИОНИРОВАНИЕ ТЕРРИТОРИАЛЬНЫХ ЕДИНИЦ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В СООТВЕТСТВИИ С ПРОБЛЕМАМИ, ПРЕПЯТСТВУЮЩИМИ ЭФФЕКТИВНОМУ ИСПОЛЬЗОВАНИЮ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫХ ЗЕМЕЛЬНЫХ РЕСУРСОВ

АНДРАНИК АКОПОВИЧ БАГДАСАРЯН
аспирант Ереванского государственного университета

Аннотация

Статья посвящена изучению факторов, влияющих на проблему неиспользования определенной части земель сельскохозяйственного назначения в Республике Армения. Обоснована необходимость направленной на решение проблемы политики, дифференцированной по территориальным единицам. Предлагается концепция регионирования территориальных единиц в целях обеспечения адрессности политики для решения этой проблемы, а также алгоритм регионирования, исходя из причин некультивирования сельскохозяйственных земель.

Ключевые слова: *сельскохозяйственные земли, регионирование, дифференцированная экономическая политика, причины некультивирования, глубина проблемы, территориальные различия, диспропорции развития, экстенсивный рост сельского хозяйства.*

REGIONALIZATION OF TERRITORIAL UNITS OF THE REPUBLIC OF ARMENIA IN ACCORDANCE WITH THE PROBLEMS IMPEDING THE EFFICIENT USE OF AGRICULTURAL LAND RESOURCES

ANDRANIK HAKOB BAGHDASARYAN
Ph.D. Student, Yerevan State University

Abstract

The article discusses the factors affecting the problem of non-usage of particular parcels of the agricultural lands in the Republic of Armenia. In particular, we tried to corroborate the need for a differential policy with respect to the territorial units that would tackle the problem. Especially, the concept the regionalization of the territorial units is proposed, in order to ensure that policies aimed at solving the issues are well-targeted. Regionalization algorithm is proposed, based on the reasons for not cultivating the agricultural lands.

Keywords: *Agricultural lands, regionalization, differentiated economic policy, reasons for not cultivating, the depth of the problem, territorial differences, development disparities, extensive agricultural growth.*